

Թիւ 26915
Յունիս 19, 1980

Մեծայարգ
Տիար Սարգիս Չիլինկիրեան
Փոխ Ատենապետ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Թորոնթօ.

Յարգելի Տիար Չիլինկիրեան,

Ժամանակին ստացած ենք ծիական Խորհուրդիդ դրկած նամակներն ու հե-
ռագիրները:

Յայտնած էինք ձեզի, որ այցելու հոգեւորականի կարգադրութիւն ընէք
ժամանակուան մը համար, որովհետեւ Եկեղեցւոյդ Հոգեւոր Հովիւ Հոգ. Տ.
Վազգէն Ծ. Վրդ. Քէշիշեան երեք շաբաթ արձակուրդ առնելէն յետոյ պիտի
չկարենար անմիջապէս վերադառնալ իր պաշտօնին:

Ընդառաջելով Հոգեւոր Հովիւին մեզի ներկայացուցած խնդրանքին, ծիա-
կան Խորհուրդիդ եւս կը յայտնենք որ Հոգ. Տ. Վազգէն Ծ. Վրդ. Քէշիշ-
եան կը դադրի Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր
Հովիւի իր պաշտօնէն:

Ծիական Խորհուրդը թող հաճի Առաջնորդի Փոխանորդ Հոգ. Տ. Յուսիկ
Ծ. Վրդ. Պաղտասեանի հետ կատարել անհրաժեշտ կարգադրութիւնները կրօ-
նական պաշտամունքներու համար, ցնոր անօրինութիւն:

Կը մաղթենք որ Աստուծոյ օրհնութիւնը անպակաս ըլլայ ծիական Խոր-
հուրդիդ եւ Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ մեր համայնքի բոլոր
անդամներուն վրայէն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐՔՈՄ՝ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ